

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԱԿԱՐԳԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Գ. Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

4—5-րդ դարերում հայ իրականության մեջ տեղի ունեցած իրադարձությունները, մասնավորապես հայ գրերի գյուտը և հայ մատենագրության ստեղծումը չափազանց սրեցին հետաքրքրությունը դեպի լեզվաքերականական գիտելիքները: Հայ գրականությունն այդ շրջանում բուն վերելք էր ապրում և չէր կարող առաջընթաց ունենալ առանց քերականագիտության, որի սկզբնավորման համար հիմք հանդիսացավ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» երկի թարգմանական տարբերակը: Ամփոփելով իր նախորդների աշխատանքը, Թրակացին իր ուսումնասիրության մեջ սահմանում էր խոսքի մասերը, քրեանության առումը դրանց ուղեկցող քերականական հատկանիշները: «Անվան» հասկացության հետ կապված, որի մեջ բացի գոյականից մտնում էին նաև ածականը, թվականը և մի շարք դերանուններ, նա քննում էր թիվը, սեռը, հոլովը: Թրակացին տարբերում էր անունների երեք թիվ՝ եզակի, երկակի և հոգնակի: Բայց մինչև այդ թվի շուրջ արված առաջին գրավոր դաստիարակությունը գտնում ենք Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցում», որտեղ քննադատելով Մարկիոնի աղանդը, նա գործածում է «միաբար» և «քազմաբար» բառերը, առաջինը՝ եզակի, իսկ երկրորդը՝ հոգնակի թվի հասկացության համար: Նախքան Թրակացու երկի թարգմանությունը գոյություն ունեցած ոչ հունարեն երկերում հանդիպող բուն քերականական տերմինների մասին խոսելիս, ակադ. Գ. Զառուկյանը ձևում է այս փաստը. «Եզնիկի մոտ հանդիպում են նաև քերականական այլ տերմիններ. Մարկիոնի աղանդի դեմ գրած մի հատվածում, որտեղ վիճաբանության մեջ նա ստիպված է դիմել լեզվական փաստերի օգնությանը, հանդիպում ենք «միաբար» և «քազմաբար» տերմիններին՝ եզակիի և հոգնակիի համար»:

Բերենք «Եղծ աղանդոցից» այդ հատվածը. «Բայց երկինս և երկնից երկինս յայն սակս գտանեմք ի գիրս, զի յերայեցոց լեզու երկին չմարթի ասել, որպէս և ոչ յասորի լեզու՝ ջոր կամ երկին. այլ մին քազմաբար ասի: Եւ յայտ անտի է, զի երունասանիցն թարգմանեալ ի յոյն լեզու, ասեն. ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր, իբրև զմիոյ երկնէ յայտ արարեալ: Եւ յասորի լեզու չմարթի ասել. ասէ. ի սկզբանէ արար Աստուած զյաթն երկինս և զյաթն երկիր, թէպէտ և միաբար չմարթի ասել նոցա զմիոջէ երկնէն, սակսն յաթն ասելով՝ որ է տարր՝ իբրև զմիոջէ տարերէ միոյ երկնի յայտ անէ թարգմանութիւնն»:

Այս տողերից զգացվում է, որ Եզնիկ Կողբացին լավատեղյակ է եղել քերականական երևույթներին և մինչև Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» հայերեն թարգմանությունը ծանոթ է եղել քերականական այնպիսի իրականությունների, ինչպես եզակի թվով դրված բառի հոգնակի իմաստ արտահայտելու երևույթը: «Անվան» քերականական հատկանիշների, այդ թվում նաև գոյականի քննության հարցը որոշ չափով տեսական հողի վրա դրվեց Թրակացու «Քերականական արվեստ» գրքի թարգմանությունից հետո, որը սակայն լինելով թարգմանություն, չէր կարող լուծել հայոց լեզվի քերականական երևույթների ուսումնասիրության հարցը: Այնուամենայնիվ, Դիոնիսիոս Թրակացու գրքում էր, որ առաջին անգամ քննվեցին այնպիսի երևույթներ, ինչպիսիք հավաքական իմաստ ունեցող, ձևով եզակի, բայց իմաստով հոգնակի բառերն էին³ և ձևով հոգնակի բառերի եզակի կամ երկակի նշանակությամբ գործածվելը⁴:

¹ Գ. Զառուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954, էջ 88:

² Եզնիկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 181:

³ II. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915 с. 17.

⁴ Նույն տեղում, էջ 20:

Թրակացու գրքի հայ թարգմանիչը հոգնակի թվի համար գործածում է «յոզնական» կամ «քազմաորական» տերմինները:

Նա նույնությամբ, բառացիորեն չի թարգմանում հունարեն տեքստը, այլ ելնելով հայերենի լեզվական ներքին օրինաչափություններից, կատարում է որոշ փոփոխություններ: «Այս իմաստով թարգմանությունն ավելի շատ փոխադրություն է, քան թարգմանություն»⁵:

Եվ իսկապես, թվակարգին առնչվող հասկացությունների մանրամասն վերլուծության ժամանակ թարգմանության մեջ նկատում ենք զանազան փոփոխություններ, որոնք անշուշտ կատարված են Թրակացու քերականությունը հայերենի լեզվական օրենքներից հարմարեցնելու միտումով: Այսպես օրինակ, հունարեն անունները վերջանում էին միայն որոշակի բաղաձայններով, և հույները նշում էին այն հնչյունները, որոնք անուններն ունենում էին ուղղակիանում բոլոր սեռերի և թվերի դեպքում: Թարգմանիչը մեխանիկորեն չի տալիս Թրակացու սահմանումը, այլ քերում է հայերեն անունների վերջավորությունները՝ եզակի ու հոգնակի ձևերի համար: Որպես հոգնակի ձևերի վերջավորություններ թարգմանիչը ներկայացնում է «այք» և «քե» հնչյունները, առաջինը սա, դա, նա դերանունների համար, երկրորդը՝ մյուս դերանունների և անունների համար⁶:

Սակայն որքան էլ նա աշխատել է Թրակացու թարգմանությունը հարմարեցնել հին հայերենի քերականական օրինաչափություններին, այնուամենայնիվ թարգմանության մեջ տեղ է գտել հայերենից խորթ այնպիսի մի երևույթ, ինչպիսին է երկակի թվի գաղափարը: Պատմական շրջանում հունարենն ուներ երկակի թիվ, և Թրակացին անհրաժեշտ է համարել հին տեքստերի ընթերցանությունը հեշտացնելու համար քերել իր քերականության մեջ այդ ձևերը, որոնք էլ հայերեն թարգմանության մեջ արհեստականորեն վերագրվել են հայերենին⁷:

Այսուհանդերձ, Դիոնիսիոս Թրակացու երկի թարգմանությունը հանդիսացավ հայերենի քերականության առաջին համակարգված շարաբարանը, որը հայ քերականագետների համար հետագայում դարձավ մեկնության առարկա: Հայ մեկնիչները, թարգմանչի նմանությամբ, հիմնականում կրկնում են «Քերականական արվեստի» սահմանումները և ջանում են դրանք մեկնաբանել հայերենի իրողություններից համաձայն: Քանի որ Թրակացու գրքում, հունարենի առանձնահատկություններից ելնելով, ընդունվել էին երեք թիվ՝ եզակի, երկակի և հոգնակի, ուստի հայ մեկնիչները ևս հետևել են այդ տարբերակմանը (Համաժ Արևելցի, Գրիգոր Մագիստրոս): Փաստորեն մեկնիչները ոչ թե Թրակացու քերականությունը հարմարեցրին հայերենին, այլ հայերենը հարմարեցրին այդ քերականությանը՝ հատկապես երկակի թվի համար ձևեր ստեղծելով⁸: Սակայն մեկնիչներից ոմանք նշում են, որ երկակի թիվը հայերենին հասուն կերևույթ չէ: Եզակիի և հոգնակիի գաղափարից բացի, տալով նաև հավաքական բառերի և անեզականների հասկացությունը, Դավիթ Մեկնիչը, օրինակ, բաց է թողնում երկակի թիվը, այն հասարելով հայերենին անհարիր: Իսկ Անանուն Մեկնիչն ու Ստեփանոս Սյունեցին պարզորոշ գրում են. «Եւ պարտ է գիտել, եթէ երկուորականն ըստ լեզույ ոչ է, այլ հաստրութիւն աթենացոցն եւ անցին քերողաց»⁹: Սակայն այնքան ուժեղ է հունարենի ազդեցությունը, որ Անանուն Մեկնիչը, այնուամենայնիվ, հայերենի դերանունների թվարկման ժամանակ քերում է երկակի թվով դերանունների արհեստական ձևեր՝ երկու դերանունների զուգորդմամբ ստեղծված. «Եւ թիւք միապէս՝ ես, դու, նա եւ երկուորակ՝ ես եւ սա, դու եւ դա, նա եւ նա»¹⁰: Նույն ձևով է վարվում և Ստեփանոս Սյունեցին, որ դերանունների մասին խոսելիս որպես երկակիի ձևեր քերում է դրանց գործիական հոլովաձևերը (իմեւ, քեւ, սովաւ, նովաւ)¹¹: Նա երկակիի արտահայտություն է տեսնում նաև ք մասնիկով կազմված հետևյալ ձևերում. **առք, ձեռք, աչք, ակամբք, բարձք, ծունկք, արունք, թաթք, թոյթք, ճկույթք, կաշիկք, մունակք** «եւ որք այլսպիսիք, զի ամենքեան սոքա երկու երկու են, իսկ քեւ ի վերայ գաղով զբազումս նշանակեաց»¹²:

Դիոնիսիոս Թրակացու և հայ մեկնիչների մոտ պարզորոշ պատկերացում կա հավա-

⁵ Փ. Զառուկյան, նշվ. աշխ., էջ 61:

⁶ Ն. Աթոնց, նշվ. աշխ., էջ 8—9:

⁷ Նույն տեղում, էջ 16—17:

⁸ Էդ. Աղապան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Եր., 1958, էջ 79:

⁹ Ն. Աթոնց, նշվ. աշխ., էջ 142:

¹⁰ Նույն տեղում, էջ 150:

¹¹ Նույն տեղում, էջ 216:

¹² Նույն տեղում, էջ 207:

քական իմաստ արտահայտող բառերի, ինչպես նաև՝ անեզականների մասին, որոնց համար գործածում են «քակձածական», «քակառական» և «պարունակ» տերմինները¹³:

13—15-րդ դարերում Հայաստանի մշակութային կյանքը նոր առաջընթաց ապրեց՝ կապված Կիրիկիայի հայկական պետության հետ, որը նորից քաղաքական ինքնուրույնություն տվեց հայ ժողովրդի մի հատվածին և նպաստավոր հող ստեղծեց նրա գիտության և գրականության զարգացման համար: Լեզվաբանության բնագավառում հանդես եկան մի շարք նշանավոր դեմքեր՝ Վարդան Արևելցի, Առաքել Սյունեցի, Հովհ. Քոնեցի, Եսայի Նչեցի և ուրիշներ, որոնք մի նոր աստիճանի քարձարցրին քերականագիտությունը:

Թրակացու քերականության մեկնիչների նման նրանք ևս, շոշափելով անվան թվի հարցը, հիշատակում են դեռևս երկակի թիվը, բայց և միևնույն ժամանակ ընդգծում, որ այդ կարգը հայերենի համար խորթ է, «ըստ լեզույ ոչ է, այլ ըստ հարստության և սթեմացուցն և նոցին քերթողացն»¹⁴: Խոսելով անվան թվի մասին, այս քերականներն անդրադառնում են նաև հոգնակերտ մասնիկներին, միաժամանակ ուշադրություն դարձնում հավաքական իմաստ ունեցող և ձևով հոգնակի, բայց իմաստով եզակի (այսինքն՝ անեզական) բառերին: Եսայի Նչեցին առանձնացնում է այն բառերը, որոնք երկուսի իմաստ են արտահայտում, բայց գործածվում են որպես հոգնակի ձևեր. ըստ նրա, երկակի թվի իմաստն այլևս չի ըմբռնվում զույգ անդամ մատնանշող բառերում, դրանք բոլորը հոգնակի են՝ կազմված հոգնակերտ ք մասնիկով¹⁵: Այս շրջանի քերականները որպես հոգնակերտ մասնիկներ նշում են կ, ք, ց վերջավորությունները, (Հովհ. Երզնկացի, Եսայի Նչեցի, Հովհ. Քոնեցի) կամ միայն ք մասնիկը՝ այն համարելով գրաբարի բուն հոգնակերտը¹⁶ (Առաքել Սյունեցի):

Հունաստիպ քերականությունից լատինաստիպ քերականությանն անցման շրջանում ըստեղծվեցին հարց ու պատասխանի ձևով կազմված երկեր, որոնցից կարելի է նշել Դավիթ Զեյթունցու «Մեկնութիւն քերականի» աշխատությունը: Ն. Աղոնցը այս աշխատությունը համարում է Հովհ. Երզնկացու քերականության վերածույլը հարց ու պատասխանի¹⁷: Եվ իսկապես, Զեյթունցին որևէ նոր բան չի ավելացնում նախորդների ասածներին, թերևս լույս միայն, որ անուն ասելով նկատի ունի միայն գոյականը: Նա ևս հայերենի համար չի ընդունում երկակի թիվը, խոսում է հավաքական, անեզական և երկու առարկայի իմաստ արտահայտող բառերի մասին և որպես հոգնակերտներ նշում է «այք» և «քէ» մասնիկները¹⁸:

Եվրոպայում հայոց լեզվի նկատմամբ հետաքրքրությունն աճեց 16-րդ դարում, և արդյունքը եղավ հայերենի առաջին քերականությունների հանդես գալը, որոնք, բնականաբար, գրաբարի քերականություններ էին և կառուցված էին լատինական քերականությունների օրինակով: Ակադ. Գ. Զահուկյանը այդ աշխատությունները որակում է որպես «լատինաստիպ քերականություններ»¹⁹: 17-րդ դարում իրենց աշխատություններով հանդես եկան Կղեմես Գալանոսը, Ոսկան Երևանցին, Հովհաննես Հակոբ Կոստանդնուպոլսեցին, Սիմեոն Զուղայեցին, Հովհաննես Զուղայեցին, Խաչատուր Կարնեցին (Արզրունեցին) և այլք²⁰:

Նշված բոլոր քերականները, քննելով անվանը (անուն ասելով նրանք հասկանում էին նաև ածականն ու թվականը) բնորոշ քերականական կարգերը, սահմանում են երկու թիվ՝ եզակի և հոգնակի («եզական» և «հոգնական»), այլևս չհիշատակելով երկակի թիվը և նույնիսկ չնշելով, որ նախորդները խոսել են այդ մասին: Որպես հոգնակերտ մասնիկներ պարզորոշ կերպով առանձնացնում են ք, ս և ց վերջավորությունները, իսկ անվան տե-

¹³ Նույն տեղում, էջ 20—21:

¹⁴ Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, Եր., 1972, էջ 125, Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, Եր., 1986, էջ 114, Յովհաննէս Քոնեցի, Հաղագս քերականի, Եր., 1977, էջ 169—170: Ձեռագիր համար 2286, թ. 128ա—128բ:

¹⁵ Եսայի Նչեցի, նշվ. աշխ., էջ 115:

¹⁶ Հովհ. Երզնկացի, նշվ. աշխ., էջ 128ա—128բ, Եսայի Նչեցի, նշվ. աշխ., էջ 115, Հովհ. Քոնեցի, նշվ. աշխ., էջ 169—170, Առաքել Սյունեցի, ձեռ. 2888, էջ 17բ:

¹⁷ Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ VII:

¹⁸ Դավիթ Զեյթունցի, Մեկնութիւն քերականի, Եր., 1981, էջ 116:

¹⁹ Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, էջ 7—8:

²⁰ Կղեմես Գալանոս, Քերական և տրամաբանական ներածություն..., Հոռն, 1645, Ոսկան Երևանցի, Քերականութեան գիրք, Ամստերդամ, 1686, Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հոռն, 1674, Սիմեոն Զուղայեցի, Գիրք որ կոչի քերականութիւն, Կ. Պոլիս, 1725, Յովհաննէս Զուղայեցի, Համառոտ քերականութիւն և տրամաբանութիւն..., Ամստերդամ, 1711, Խաչատուր Արզրունեցի, Գիրք քերականութեան, Էջմիածին, 1696:

ասկաները նշելիս այս քերականներից ոմանք առանձնացնում են հատուկ կամ հասարակ անուններ (Հովհ. Ջուղայեցի), մյուսները որպես երրորդ ձև նշում են նաև բազմանկարան (հավաքական) անունները (Կղեմես Գալանոս, Հովհ. Կոստանդնուպոլսեցի, Խաչատուր Կարնեցի): Անունների թիվը սահմանելիս իր մանրամասն վերլուծությամբ առանձնանում է Հովհ. Կոստանդնուպոլսեցին (Հոլովը), որը առանձին կետերով կանոնարկում է հայերենի գոյականների հոգնակի ձևերի կազմությունը:

Սյապես՝

1. Այն անունները, որոնք վերջանում են ձայնավորով, հոգնակի ձևեր կազմում են -ք մասնիկի միջոցով՝ ոսկի—ոսկիք, արծաթի—արծաթիք, ոգի—ոգիք, բու—բուք, էրէ—էրէք: Որպես բացառություններ նշում է ձու—ձուանք, ձի—ձիանք, լու—լուանք և այլն: Նույն ձևով են հոգնակի կազմում այն հատուկ անունները, որոնք վերջանում են ձայնավորով. Ջաքարիա—Ջաքարիանք, Ազարիա—Ազարիանք, Հռիփսիմէ—Հռիփսիմէանք և այլն, որոնք բացի -ք-ից հոգնակիում ստանում են նաև այլ հնչյուններ:

2. Այն անունները, որոնք եզակիում վերջանում են մեկ քաղաձայնով, հոգնակի կազմում են -ք մասնիկով՝ միտ—միտք, մեղ—մեղք, աչ—աչք, հնձամ—հնձամք: Այս կանոնից դուրս են մնում՝ կոյս—կուսանք, էշ—իշունք, մազ—մազունք, մեծ—մեծիմք, երազ—երազունք և այլն, որոնք ոչ միայն -ք, այլև մի ամբողջ վանկ են ստանում հոգնակիում:

3. Երկու քաղաձայնով վերջացող անունները -ք մասնիկից բացի, առաջին քաղաձայնից հետո ստանում են որևէ ձայնավոր՝ գառն—գառնիմք, լիտր—լիտրք և այլն: Բացառություն են կազմում՝ մարտ—մարտք, գունդ—գունդք, ծնունդ—ծնունդք, սերունդ—սերունդք, ազուստ—ազուստ և այլն:

4. Նույն ձևով են հոգնակին կազմում երեք քաղաձայնով վերջացող բառերը, որոնք նույնպես երկրորդ քաղաձայնից առաջ ստանում են որևէ ձայնավոր. դաստեր—դաստերք, արկղ—արկղեք և այլն²¹:

Խոսելով հոլովական ձևերի կազմության մասին, Հոլովն ընդգծում է, որ հոգնակի հայցականը հոգնակի ուղղականից տարբերվում է միայն -ս հոգնակերտ մասնիկի միջոցով՝ պարզորոշ առանձնացնելով հոգնակի ուղղականի -ք մասնիկը որպես հիմնական հոգնակերտ:

Սիմեոն Ջուղայեցին այս շրջանի քերականներից առաջինն է, որ առանձնացնելով հոգնակի թվում անունների ունեցած -ք, -ս, -ց վերջավորությունները, մատնանշում է նաև այն հոգնակի ձևերը, որոնք կազմվում են գործող կանոնից դուրս, այսինքն՝ անկանոն հոգնակիները. «Եւ ամենայն հոգնականք լինին երիւք տառիւք այտքիւք. սէի, ցոյի և քէի. և արտաքոյ այտցիկ երէին այլ ոմանք յոգնականք. որգոն աւագանին, մանկտին»²²:

18-րդ դարի սկզբից մինչև նույն դարի երրորդ քառորդն ընկած ժամանակահատվածն առանձնանում է որպես լատինատիպ-քանասիրական քերականությունների շրջան²³: Եվրոպական հայագետների մեջ ուժեղանում է հայերենը գիտականորեն ճիշտ ներկայացնելու ձգտումը: Յոհան Ծրյոդերը, Մխիթար Սեբաստացին, Բաղդասար Դպիրը, քննադատաբար մոտենալով նախորդների արհեստական նորամոծություններին, աշխատում են հայերենը նկարագրել այնպես, ինչպես իրականում է:

Յոհան Ծրյոդերի քերականությունը դարձավ հայերենի ուսումնասիրության բնագավառում մինչ այդ կատարված աշխատանքների հանրագումարն ու ամփոփումը: Ծրյոդերն իր նախորդների նման սահմանում է անունների երկու թիվ՝ եզակի և հոգնակի, նշում հոգնակերտ -ք, -ս, -ց մասնիկները՝ ընդգծելով, որ երբեմն յ տառը երկհնչյուններում դուրս է մղվում հոգնակի ձևերի կազմության ժամանակ. հայր—հարք, մայր—մարք, այր—արք, այսպիսով առաջին անգամ ուշադրություն դարձնելով հոգնակի ձևերի կազմության ժամանակ տեղի ունեցող հնչյունափոխությանը: Նա առանձնացնում է հավաքական (եզակի ձևով հոգնակի իմաստ արտահայտող) և անեզական (հոգնակի ձևով եզակի իմաստ արտահայտող) անունները, որոնց կողքին որպես երրորդ ձև ավելացնում է եզակի կամ հոգնակի ձևի կրկնությամբ կազմված հոգնակի ունեցող անունները²⁴:

Մխիթար Սեբաստացին, մի փոքր ավելի մաքրամասն քննության ենթարկելով գոյականի թվի կարգը, առանձնացնում է անեզական քառեր՝ ապրանք, պատրանք, ընթացք, տեսք, արարք, աչք և նշում այն փաստը, որ -ք հոգնակերտ մասնիկը կարող է հանդես գալ նաև որպես ածանց²⁵: Սեբաստացին նույնպես ուշադրություն է դարձնում այն բանին,

²¹ Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, նշվ. աշխ., էջ 129—180:

²² Սիմեոն Ջուղայեցի, նշվ. աշխ., էջ 58:

²³ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 175:

²⁴ Յոհան Ծրյոդեր, Արամեան լեզուի գանձ, Ամստերդամ, 1711, էջ 54—56:

²⁵ Մխիթար Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1780, էջ 241:

որ մի շարք բառերի հոգնակի ձևերի կազմության ժամանակ ք-ից առաջ ավելանում են ուն, ին, ան հնչյունակապակցությունները՝ արեգակն—արեգակունք, շուրթն—շրթունք, քար—քարինք, ձի—ձիանք, նու—նուանք, սա բացատրելով արտասանությունն ավելի բարեհրնչյուն դարձնելու ձգտումով «զի բարեպէս ոչ արտաբերին՝ արեգակք, շուրթք, քարք, ձիք, նուք»²⁰: Սեբաստացին նաև խմբավորում է անեգական, անհոգնական և տարբեր այլ մասնիկներով հոգնակի կազմող բառերը՝ ըստ զանազան հատկանիշների:

Բաղդասար Դպիրն իր քերականության մեջ ևս քննելով անունների թիվը, կրկին ընդգծում է այն փաստը, որ հայերենում մեկից ավելին կարող է արտահայտվել միմիայն հոգնակիի ձևերով: Նա առանձնացնում է նաև անեգական ու անհոգնական բառերը՝ ավելի շատ ուշադրությունը կենտրոնացնելով դրանց իմաստային կողմի վրա. այսպես՝ աշխարհ, երկիր գոյականների մասին նշում է, որ եթե «միայնակ իմանին» (այսինքն՝ մեկ տարկա են նշանակում), ապա անհոգնական են, իսկ որպես հասարակ անուններ գործածվելիս կարող են կազմել հոգնակի ձևեր: Դպիրը թվարկում է նաև այն հավաքական բառերը, որոնք եզակի ձևով բազմության իմաստ են արտահայտում, բայց ոչ նույն անվան համար: Այսպես. հօտ թեև բազմություն է նշանակում, բայց բազմաթիվ հոտերի իմաստ չունի, այլ արտահայտում է ոչխարների ամբողջությունը: Հավաքական են՝ հօտ, տարմ, գունդ, բանակ, երամ, ժողով, ժողովուրդ, որոնց հոգնակի ձևերը կազմվում են -ք հոգնակելու միջոցով²¹: Այսպիսով, Դպիրն առանձնացնում է գրաբարի բուն հավաքական բառերը:

Հայ քերականագիտության մեջ Միքայել Չամչյանի քերականությանը մի նոր շրջան է սկսվում: Ըստ Գ. Ջահուկյանի, Չամչյանն առաջին հեղինակն էր, «որ գրաբարի քերականությունը վերջնականապես ազատեց հունարանության և լատինարանության բացասական ավանդույթներից, քերականության մեջ մտնված արհեստական «բարեփոխումներին» հակադրեց հին տեքստերի անկանխակալ ուսումնասիրության և մատենագրական վկայությունների վրա հիմնված քերականական կանոններն ու բացատրությունները»²²:

Այս նոր շրջանում գրված քերականական ուսումնասիրություններից հիշատակության են արժանի նաև Գաբրիել Ավետիսյանի, Մեսրոպ Տեր-Հարությունյանի, Միքայել Սալյանյանի, Վրթանես Չալըխյանի, Արսեն Բագրատունու աշխատությունները²³:

Գրաբարում հոգնակիի սովորական կազմության համար այս քերականները նշում են առաջին հերթին ք, ս, ց մասնիկները: Որպես հոգնակիի կազմության երկրորդ ձև առանձնացվում են մի շարք այլ մասնիկներ՝ ան, անի, եան, եար, եակ, եր, իկ, կան, նեար, կենար, որայ, որեայ, ուի, ստան, տի, ոտի, այք, ետք, անք, ինք, իք, ոյք, ունք, օնք, էք, օրք և բերվում են համապատասխան օրինակներ²⁴: Ինչպես տեսնում ենք, այս մասնիկների մո մասը բարդված է -ք հոգնակերտով, և սրանցով կազմված հոգնակի ձևերը Կ. Ավետիսյանը համարծեք է համարում գրաբարի բուն հոգնակերտով (ք) կազմված հոգնակիի սովորական ձևերին: Միանշտե մյուս մասնիկները նա հոգնակերտներ չի համարում, քանի որ՝ դրանցով կազմված բառերն անվանում է եզակյանաձև²⁵:

Արսեն Բագրատունին, Ավետիսյանի նմանությամբ, վերը նշված հոգնակերտները բաժանում է երկու խմբի՝ -ք-ով բաղադրված և առանց -ք հոգնակերտի: Երկրորդները նա անվանում է հավաքականակերտ մասնիկներ, որոնցով կազմված բառերը եզակիաձև են հերոպվում, բայց երբեմն կարող են ստանալ -ք կամ -ս մասնիկները²⁶:

Այս հոգնակերտ-հավաքականակերտ մասնիկների երկրորդ խումբը Մ. Տեր-Հարությունյանը համարում է ածանցական մասնիկների մի տեսակը և անվանում է «առաելական»

²⁰ Մխիթար Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 241:

²¹ Գաղղասար Դպիր, Գարգաբանութիւն քերականութեան կարճառոտ և դիւրիմաց, Կ. Պոլիս, 1736, էջ 208—206:

²² Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 303:

²³ Միքայել Չամչեանց, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1859, Գաբրիել Ավետիսեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, Մեսրոպ Տեր-Յարութիւնեան, Քերականութիւն համառօտ պարզութեամբ յաշխարհաբար լեզուէ ի գրաբարն հետգհետ յառաջացուեալ՝ ի գիտութիւն ուսանողաց, Կոստանդնուպօլիս, 1808, Միքայել Սալյանյեան, Քերականութիւն գրաբար լեզուիս հայոց, Մոսկով, 1827, Վրթանես Չալըխեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1852, Արսեն Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

²⁴ Մ. Չամչեանց, նշվ. աշխ., էջ 99—100, Գ. Ավետիսեան, նշվ. աշխ., էջ 242—245, Վրթ. Չալըխեան, նշվ. աշխ., էջ 136, Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 45—56:

²⁵ Գ. Ավետիսեան, նշվ. աշխ., էջ 242—245:

²⁶ Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 45—56:

մասնիկներ, որոնցով ածանցված բառերը եզակի ձևով հոգնակի իմաստ արտահայտող գոյականներ են. աւագանի, ծակտի, գրեան, վարժեար, օրեր, մարդիկ, բազմական, մանկըտեակ³³: Ըստ Այտընյանի, այս մասնիկներով կազմված հոգնակի ձևերը ավելի սովորական են ւշխարհութար հայերենի զարգացման տարրեր փուլերի համար³⁴:

Քերականներից ոմանք որպես հոգնակի կազմության երրորդ ձև նշում են նույն անվան եզակի կամ հոգնակի ձևի կրկնությամբ կազմված ձևերը՝ այր այր, քաղաքի քաղաքի, ընտիր ընտիրքն, ազգք և ազգք, ի գաւառաց գաւառաց, ընդ ժամանակս ժամանակս, ի տունս տունս, գունդագունդ, տարմատարմ և այլն³⁵: Ըստ Ա. Բագրատունու, -րթյուն ածանցով կազմված բառերը նույնպես կարող են հոգնակիության իմաստ արտահայտել՝ գերութիւն, յանցաւորութիւն, քահանայութիւն և այլն: Հոգնակիության իմաստ ունեն նաև այլեայլ, բազում, գամազամ, ամենայն բառերով կազմված հարադրություններ³⁶: Վրթ. Չալիխյանը -ություն ածանցով կազմված բառերը դասում է հավաքականների շարքին³⁷, և կարծում ենք, իրավացի է, քանի որ հավաքականությունն ինքնին արդեն ենթադրում է հոգնակիություն, և -ություն ածանցում առկա է հավաքական-հոգնակիության իմաստը:

Անուն խոսքի մասի համար բոլոր այս քերականները նշում են երեք տեսակ՝ հասարակ, հատուկ, հավաքական, և միայն Ա. Բագրատունին է, որ հավաքականներն իրավացիորեն ստորաբաժանում է անեզակականների ու անհոգնակականների և ոչ թե հատուկ ու հասարակ անունների հետ՝ որպես երրորդ ձև: Հավաքական անունները իմաստային և քերականական հատկանիշներով չեն հակադրվում հատուկ և հասարակ անուններին, և իրավացի է պրոֆ. Հ. Բարսեղյանը, երբ գրում է, որ այս տարբերակումը կարող էր առաջանալ անվան թվային հատկանիշի քննության ժամանակ միայն, երբ հավաքականները կհակադրվեին եզակի և հոգնակի գոյականներին, այն էլ ոչ իբրև հավասարաթեք հակադրություն³⁸:

Գ. Ավետիքյանը խոսելով հատուկ անունների մասին՝ նշում է, որ ըստ իրենց նշանակության հոգնակի չեն կազմում, սակայն երբ անհրաժեշտ է լինում հիշել շատ մարդկանց, որոնք նույն անուն ունեն, երկու ձևով կարող են հոգնակի կազմել. նախ՝ -եանք մասնիկի կցմամբ՝ գրիգորեանք, ներսիսեանք, յովհաննիսեանք, որ նշանակում են գրիգոր, Աեր, ներսեաներ, յովհաննեաներ, և երկրորդ՝ -ք, -ց մասնիկների ավելացումով³⁹: Այսպիսով Գ. Ավետիքյանը հատուկ անունների հոգնակի ձևերի արտահայտած իմաստի մեջ միայն բուն հոգնակիություն է տեսնում, չնկատելով հավաքականության իմաստը, որը բացարձակապես առկա է նշված ձևերում: Գրիգորեանք նշանակում է ոչ միայն գրիգորներ, այլև՝ Գրիգորի կողմնակիցների, արյունակիցների, հետևորդների բազմությունը: Ա. Բագրատունին նույնպես, հատուկ անունների հոգնակի ձևերի կազմության համար առանձնացնելով -այք, -անք, -եանք, (Տիտանք, Տիգրանք, Յուդայք, Թեոդոսեանք, Գրիգորեանք) մասնիկները, պնդումս են այնպիսի չի նկատում դրանցում եղած հավաքականության իմաստը՝ կրկնելով Ավետիքյանին⁴⁰:

Անունների թվակարգի քննությունը կատարելիս քերականներն առանձնացնում են նաև անեզակական և անհոգնակական բառերը՝ տալով դրանց բացատրությունը և քերելով համապատասխան օրինակներ: Ավետիքյանը անեզակական և անհոգնակական բառերի հետ միասին առանձնացնում է բառերի ևս երկու խումբ՝ դրանք անվանելով «աւելի յոքնական» և «աւելի եզական», ըստ եզակի կամ հոգնակի ձևերի գործածության հաճախակաճության:

«Ավելի յոքնական» են շնորհք, օրենք, ցաւք, էլք, վերք, ինչք, ցոյցք, հաստոք, պատճառք, անուրջք և այլն: «Ավելի եզական» են՝ վախճան, մեղր, ձէք, հուր, պատիւ, հաճգիստ, երկիր և այլն: Ինչպես նկատում ենք, առաջին խմբում Ավետիքյանը բերում է նաև անեզակական բառեր՝ շնորհք, օրենք, էլք, որոնց եզակի կամ հոգնակի գործածությունը, ինչպես հայտնի է, իմաստային պայմանավորվածություն ունի, երկրորդ խմբի բառերի մի մասը անհոգնակական են, որոնք, բնականաբար, պետք է եզակի գործածություն ունեն-

³³ Մ. Տեր Յարութիւնեան, նշվ. աշխ., էջ 11—13:

³⁴ Վրթ. Չալիխեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի հանդերձ փոփոխմամբք և յարևուտովք աշխատասիրեալ ի Հ. Արսենէ Վ. Այտընեան, Վիեննա, 1885, էջ 185:

³⁵ Գ. Ավետիքեան, նշվ. աշխ., էջ 242—245, Վրթ. Չալիխեան, նշվ. աշխ., էջ 186—188, Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 45—50:

³⁶ Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 45—50:

³⁷ Տե՛ս Վրթ. Չալիխեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիեննա, 1852, էջ 186:

³⁸ Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980, էջ 188:

³⁹ Գ. Ավետիքյան, նշվ. աշխ., էջ 248:

⁴⁰ Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 51—52:

Յեղիմ, ուստի այսպիսի քաժանուճը կարծում ենք ավելորդ է: Այնուհետև Ավետիքյանը շեղում է անեզակակաների՝ ձևով եզակի կամ հոգնակի գործածության հարցը՝ կապելով ռուսալեզու իմաստի հետ: Այսպես՝ մեղք էթե նշանակում է «մեղանշական գործ», միայն հոգնակի ձևով է գործածվում, իսկ մեղադրանքի պակասության իմաստով՝ քայի հետ դըրվում է եզակի թվով. «մեղ ինչ ոչ գոյր նոցա, մեղ ևս զի դնէ» և այլն⁴¹:

Անեզակակաների՝ եզակի թվով գործածությունը Ա. Բագրատունիին քացատրում է իմաստի փոփոխությամբ՝ մեղ դնել, մեղ առնել, միտ դնել, ի միտ առնուլ, դնել ի մեծի, կամ է, կամ եղև ինչ և այլն: Նույն պատճառով էլ որոշ անհոգնակականեր կարող են հոգնակի ունենալ՝ մաճք, մահուճք (կոտորածի, արյունահեղության իմաստով), հողք (այլաբեք՝ կալվածք), հուրք (խարույկ, ջահեր) և այլն: Կան քառեր, որոնք առավելապես հոգնականան են գործածվում՝ երկինք, շնորհք, օրենք, արդիւնք, դաւք, վերք, հաւաքք, տղիք, վերծք և այլն, կան քառեր էլ, որոնք ընդհակառակն՝ եզակի ձևով են գերազանցապես հանդես գալիս՝ սէր, սուգ, վախճան, քուն, մեղր, ձէք, հուր, երկիւղ և այլն⁴²:

Ինչպես եկատում ենք, այս քաժանուճը կատարելիս Բագրատունին հիմնականում հետևում է Գ. Ավետիքյանին:

Չամչյանը խաւար, լոյս, տիւ, սէր, յոյս և այլ անհոգնական քառերին ավելացնում է քոյր հատուկ անունները, իսկ անեզակակաների՝ ձևով եզակի գործածությունը կապում է դրանց՝ քայերի հետ հաճախակի կիրառության հետ. «Անձանց իրեանց մեղ է», «Որոց զիարդ կամ ելև անձանց իրեանց»⁴³:

Մ. Սալլանթյանը քոյր անունները քաժանում է երկու խմբի՝ «կանոնաւոր» և «պալատաւոր»: Պակասավոր է համարում այն անունները, որոնք կամ թվային, կամ հոլովակամ ձևերի անկանոնություններ են հանդես բերում: Այս խմբին են դասվում հոգնակի թիվ չունեցող անհոգնական քառերը և միայն հոգնակի թվով հոլովվող անեզական քառերը⁴⁴:

Բարդությունների քննությունը կատարելիս, քերականներից ոմանք անդրադառնում են ազն քառերին, որոնք քաղադրիչներից մեկը անեզական գոյական է: Գ. Ավետիքյանը քերքում է մի շարք անեզական քառեր, որոնք անկախ նրանց առաջադաս կամ ետադաս քաղադրիչ լինելուց, սովորաբար գործածվում են եզակի ձևով, քացի սեռական և հայցական հոլովներից (կանանցածին, քարեացապաշտ, չարեացապաշտ, կենսագործ, կենսառոտ, մեղասատր և այլն): Հազվադեպ է հանդիպում, երբ որպես բարդության վերջին քաղադրիչ՝ անեզականները պահպանում են -ք հոգնակերտ մասնիկը, հատկապես՝ երբ լրացումը (առաջին քաղադրիչը) ածական է՝ քարձրագահուրք, յորդահոսանք, հրահոսանք և այլն: Սակայն Մ. Սալլանթյանի կարծիքով, անեզական գոյականները որպես առաջին քաղադրիչ գործածվելիս կամ -ք հոգնակերտ մասնիկ չեն ունենում (մեղադիր, օրհնագանց, աղօթասէր), կամ հանդես են գալիս հայցականի ձևով (կենսաթիռ, մեղաճաշակ, օրէնսուսոյց), իսկ բարդության երկրորդ քաղադրիչ լինելիս պահպանում են հոգնակերտ ք ժանիկը (քարձրագահուրք, գլորակամք, հարկապիտուրք, ձիոհանք), քացատրությամբ մի քանի քառերի (յոզմամեղ, կորովամիտ, յօժարակամ, այլափառ և այլն)⁴⁵:

Գոյականի թվի և առհասարակ թվակարգի գիտական ուսումնասիրությունը կապվում է 18-րդ դարի վերջին քառորդի և 20-րդ դարի լեզվաբանության հետ, իսկ մինչ այդ եղած քերականական աշխատություններում թվակարգի ուսումնասիրության պատմությանը անդրադարձանք վերը՝ ընդհանուր գծերով, ընդհանրացնելով տարբեր քերականների՝ գոյականի թվի վերաբերյալ ունեցած կարծիքներն ու տեսակետները, ուստի և աամսամափակվենք այսքանով:

Г. М. ПЕРСИЯН—Из истории изучения категории числа существительного. — В статье подробно рассматриваются мнения и суждения в трудах древних и средневековых грамматиков относительно категории числа существительных. Автор обстоятельно останавливается на лексических классификациях в связи с числом существительного начиная с толкователей грамматики Дионисия Фракийского до исследователей языковедов 18-го века.

⁴¹ Գ. Ավետիքյան, նշվ. աշխ., էջ 246:

⁴² Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 56:

⁴³ Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 100:

⁴⁴ Մ. Սալլանթյանց, նշվ. աշխ., էջ 28—54:

⁴⁵ Նույն տեղում, էջ 397—398: